

«ՀԻՇՈՂՈՒԹՅԱՆ ՊԱՏԵՐԱԶՄԻ» ՆՈՐ
ՄԱՐՏԱՀՐԱՎԵՐՆԵՐԸ*

Գոյություն չունի ներկայի որևէ հորիզոն՝ իր մեջ և իր համար, ճիշտ այնպես, ինչպես գոյություն չունեն պատմական հորիզոններ, որոնց հնարավոր է հասնել: Ընդհակառակը, հասկացումը միշտ էլ իբր թե՝ իրենք իրենց համար գոյություն ունեցող այս հորիզոնների միաձուլումն է:

Հանս-Գեորգ Գադամեր¹

Երևանում իր վերահրատարակման եռամյա ժամկետն ավարտող «Վեմ»-ի էջերում լույս տեսած հրապարակումների արձագանքները վկայում են, որ հայագիտության առջև կանգնած հիմնախնդիրների քննության համար մեր հանդեսի առաջադրած՝ ճշմարտության և արդարության անխզելի միասնության աշխարհայացքային մեկնակետը հաստատել է իր կենսունակությունը:

Սակայն հարևանների հետ շարունակվող և ակնհայտորեն ընդլայնվող «հիշողության պատերազմի» նոր մարտահրավերները ներկայումս օրակարգային են դարձնում այդ անխախտ սկզբունքի կիրառման ձևերի ու եղանակների հստակեցման և արդիականացման պահանջը: Հայագիտությունը և նրա հիմնական գիտակարգերը այսօր հայտնվել են ողջ երկրի համար հատկանշական՝ գոյատևման ու զարգացման առաջադրանքներն արտացոլող երկու «թղթածրարների» առջև: Բաղաքական կյանքում, տնտեսության մեջ և ազգի կենսագործունեության այլ ոլորտներում նույնպես առկա այդ օբյեկտիվ իրողություններից առաջինն առավել հստակորեն է երևակվում Հայաստանի պետական սահմանին կանգնած զինվորի, իսկ երկրորդը՝ աշխարհին լիովին նոր հայացքով նայող գիտնական-ծրագրավորողի դիտանկյունից: Խոստովանենք, որ այս երկու դիտանկյունների գոյության փաստն ամենևին էլ կախված չէ մեր սեփական ցանկությունից, քանզի մի կողմից՝ վտանգված երկիրն ու հասարակությունը հայ գիտնականի հոգում ամրապնդում են քաղաքացիական պարտքի զգացողությունը, իսկ մյուս կողմից՝ նա սուր կերպով գիտակցում է հետարդիականությանը բնորոշ գիտաճանաչողական նոր մոտեցումներով աշխարհին հասկանալի դառնալու պահանջը: Ուստի, ներկայումս նոր գիտելիքների յուրացման առաջադրանքը ձեռք է բերում կրկնակի արժեք ու նշանակություն: Այն իմաստավորվում է ոչ միայն իբրև

*Ընդունվել է տպագրության 20.03.2012:
1 X.-Г. Гадамер, Истина и метод: основы философской герменевтики, <http://elenakosilova.narod.ru/studia2/gadamer2.htm>, с. 361.

Գ (Ճ) քաղի, թիվ 1 (37) հունվար-մարտ, 2012
Վեմ համահայկական հանդես

առաջադիմության կարևորագույն խթան, այլև հարևանների հետ շարունակվող «հիշողության պատերազմում» ավելի կատարյալ և արդիական միջոցներով «գինվելու» հնարավորություն:

Երբեք չի կարելի անտեսել այն իրողությունը, որ հենց ներկա պահին երկրագնդի որևէ անկյունում հրապարակվող կեղծարարական գրականության մեջ փորձ է արվում յուրացնել կամ մարդկության հիշողությունից ջնջել Հայաստանի ու հայության պատմամշակութային ժառանգության այս կամ այն դրվագը: Սակայն ակնհայտ է նաև, որ նման վտանգին դիմագրավելու **ընթացիկ աշխատանքը** բացարձականացնելու և հայագիտության զարգացման հեռանկարներից կտրելու դեպքում ինչ-որ հանգրվանում **խաղի կանոնները** թելադրողի դերում կարող են հայտնվել գիտությունը սովորական աճպարարությունների դաշտի վերածող մեր հակառակորդները: Ի վերջո, մեզ լիովին օտար հոգևոր-մշակութային միջավայրից բխող նրանց մտածելակերպն այսօր էլ արմատական հակասության մեջ է հայ մշակույթի էության հետ: Մեր հարևան երկու պետությունների՝ Թուրքիայի ու Ադրբեջանի ժողովուրդներին պատմականորեն բնորոշ տնտեսվարման **ասպատակային** ձևը հեռավոր տափաստաններից ներկայումս տեղափոխվել է էլեկտրոնային ու տպագիր լրատվամիջոցների և թանկարժեք ու շքեղ «գիտական» հրատարակությունների էջերը:

*Ինչպես վկայում է «**Վիքիպեդիա**» հանրագիտարանը, «Բազմաթիվ թյուրքական ժողովուրդների մոտ պարմակալներն փարածված է եղել ասպատակային փրկեստությունը»², այսինքն՝ սեփական գոյարևման միջոցների հայթայթումը նստակյաց ժողովուրդների վրա պարբերական հարձակումների, նյութական հարստության ու հոգևոր արժեքների ոչնչացման կամ յուրացման միջոցով: Միջնադարից հայրենի այս գործելակերպը նոր և նորագույն ժամանակներում արդիականացրել է միայն իր դրսևորման եղանակներն ու միջոցները: Օրինակ՝ հայրենի է, որ ցեղասպան երիտթուրքերի կողմից ժամանակին խորասպես յուրացվել էր միանգամայն քաղաքակիրթ գիտնական Չարլզ Դարվինի գոյության կռվի մասին ուսմունքը, որովհետև այն հիմնավորում էր ուժեղների կողմից թույլերին ոչնչացնելու՝ բնության մեջ գործող սկզբունքը: Սրացվում է, որ մեր հարևանների մոտ մարդկային առաջադիմության հանդեպ վերաբերմունքը ծառայել է մարդկանց ոչնչացման ավելի կատարյալ փրկությունների յուրացման նպատակին: Հարց է առաջանում՝ փոխվե՞լ է արդյոք մեր օրերում նրանց այս յուրօրինակ «մեթոդաբանությունը»:*

Ակնհայտ փաստերը ցույց են տալիս, որ ո՛չ, քանզի մարդկության հիշողությունից Հայաստանի պատմությունն ու մշակույթը ջնջելու կամ յուրացնելու թուրքադրբեջանական ներկա փորձերը «պրոգրեսի» երիտթուրքական բանաձևի հիմնավորումն ու գործադրումն են: Ավելին՝ դրանք սկզբունքորեն չեն տարբերվում նաև միջնադարի քոչվորականներին բնորոշ ասպատակային գործալակերպից:

Ուրեմն անհրաժեշտ է առաջնորդվել հակախաղի այնպիսի կանոններով, որոնք թույլ կտան մի կողմից՝ հրաժարվել մեզ պարտադրվող գործելակերպի պարզ ընդօրինակումից, իսկ մյուս կողմից՝ պաշտպանել սեփական արժեքները:

Մեր հարևանների որդեգրած խաղի կանոններից **առաջինը** բիրտ ուժի վրա հիմնված թելադրանքի կիրառումն է՝ լուրջ դիմադրության բացակայության պարագայում: Ինչպես ցանկացած ասպատակ, այնպես էլ նրանք, անմիջապես

² Տե՛ս Wikipedia.org կայքէջի ռուսերեն տարբերակում առկա՝ «Кочевники» («Քոչվորներ») բառ-հոդվածը:

ընկրկում են կազմակերպված դիմադրության հանդիպելու դեպքում: Այս առումով «ՎԷՄ» հանդեսի անցած 3 տարիների աշխատանքը բացահայտել է բավականին հետաքրքրական օրինաչափություններ:

Վկայաբերները դրանցից մեկը. ի պատասխան 2010 թվականի հոկտեմբերի 16-ին Գորիս քաղաքում Սիյուռքի լրատվամիջոցների ներկայացուցիչների առջև ՀՀ նախագահ Ս. Սարգսյանի ելույթում առկա որոշ պարունակողական դիրարկումների՝ 2010 թ. հոկտեմբերի 29-ին Ադրբեջանի նախագահի աշխատակազմի ղեկավար Ռ. Մեհթիևը այդ երկրի ռուսալեզու կայքերում տեղադրել էր մի բավականին ընդարձակ «տեղեկանք», որը Հայաստանի ու հայերի հասցեին ադրբեջանական պարունակողական կուրսակած մեծ ու փոքր հերյուրանքների հանրագումարն էր: Երբ 2011 թվականի ընթացքում մեհթիևյան հերյուրանքների գիտական պատասխանները պարբերաբար «ՎԷՄ» հանդեսի մի քանի հրատարակումների թարգմանությունները և մի շարք այլ հոդվածներ հայտնվեցին ռուսապատկան ու հայապատկան ռուսալեզու կայքերում, թվում էր, թե Ադրբեջանի նախագահի աշխատակազմի ղեկավարի «տեղեկանքին» փրկած նման հակահարվածը պետք է առաջ քերեր երկարաժամկետ, խորքային բանավեճեր երկու երկրների պարունակողների միջև: Սակայն տեղի ունեցավ ճիշտ հակառակը. նախորդ տարիներին, այդ թվում՝ 2011 թվականի ընթացքում, գրեթե ամեն շաբաթ Հայոց պարունակողական որևէ հիմնահարցի վերաբերյալ կեղծագրեր տարածող ադրբեջանցի պարունակողները «բերանները ջուր առան» ու լռեցին և սկսած 2011 թվականի վերջերից՝ որևէ էական կեղծարարություն չեն տեղադրել իրենց հայտնի կայքերում: Ի՞նչ է սա, եթե ոչ այն իրողության արձանագրումը, որ իրենց դեմ պրոֆեսիոնալներ են գործում, որոնց հնարավոր չէ հակազդել պարզունակ ասպարակությունների միջոցով:

Դրանով հանդերձ, ակնհայտ է նաև, որ հայաստանյան հայագետների այս առաջին հակազդեցության արդյունք «Ժամանակավոր հրադադարը» մեր հակառակորդը սկսել է օգտագործել քոչվորականի ինքնությանը բնորոշ խաղի երկրորդ «կանոնին» անցնելու, այսինքն՝ **շրջանցիկ կամ թիկունքային հարվածների** մասնավորապես համար: Այդ նպատակով, Ադրբեջանի գանազան էմիսարների ջանքերով, ողջ աշխարհում ներկայումս ձեռնարկվում են լավագույն գիտական կենտրոնների մասնագետներին «գնելու» և նրանց հակահայ բնույթի հանձնարարականներ տալու համառ փորձեր: Այսինքն՝ փոխվել են Հայաստանի ու հայության պատմությունն ու մշակույթը մարդկության հիշողությունից ջնջելու և յուրացնելու առաջադրանքի իրականացմանն ուղղված հետևողական քայլերի **բնույթն ու գործելադաշտերը:**

Առկա տեղեկատվության համադրումն ու վերլուծությունը ցույց է տալիս, որ առաջիկայում մեզ սպասում է պայքարի նոր, ավելի լայն և հստակորեն՝ «ինտերնացիոնալ» ճակատ, որում ադրբեջանցի կամ թուրք պարզունակ ասպատակների փոխարեն ասպարեզ են իջնելու ռուսական, եվրոպական, ամերիկյան առաջատար գիտական կենտրոնների դիպլոմավորված մասնագետները, որոնք փորձելու են «անաշառության» ցուցանակի տակ իրականացնել նույն առաջադրանքը: Մանավանդ՝ Ռուսաստանում, ուր գիտնական-հասարակագետներն ավելի ցածր են վարձատրվում միջազգայնորեն ընդունված չափորոշիչներից, հակահայ նպատակներով մասնագետներ և անգամ ամբողջ գիտահետազոտական հիմնարկներ «գնելու» գործընթացը վաղուց արդեն սկսվել է: Նույնպիսի «շփումների» դաշտ է ձևավորվել նաև եվրոպական առաջատար երկրներում և ամերիկյան մայրցամա-

ՆԱԽԲԱՐԱԿԱՆ

Գ (Գ) փայտի, քիվ 1 (37) հունվար-մարտ, 2012

ՎԷՄ համահայկական հանդես

քում, անշուշտ, ո՛չ առանց նավթադոլարների «մասնակցության»: Նման «գիտական կոռուպցիան» սերտորեն միահյուսվում է այդ երկրների օրենսդիր մարմիններում տարվող աշխատանքների հետ, որոնց միջոցով աստիճանաբար հարդարվում և ընդլայնվում է հակահայ բանաձևերի ու որոշումների ընդունման համար անհրաժեշտ դաշտը: Այդօրինակ աշխատանքների ամենացայտուն օրինակը Գերմանիայում իշխող՝ ԲԳՄ-ԲՍՄ խմբակցության Արտաքին հարցերով աշխատանքային խմբի կողմից Ղարաբաղյան հակամարտության պատմության խեղաթյուրման վրա հիմնվող առաջարկների փաթեթի նախապատրաստումն ու հրապարակումն էր, սկզբում՝ ադրբեջանական կայքէջերում, իսկ այնուհետև՝ էլեկտրոնային այլ աղբյուրներում³:

Մեր դեմ հարդարվող այս նոր և խիստ ընդարձակ ճակատում գործելու համար հայաստանյան հայագիտությունը դեռևս հարկ եղած չափով չի տիրապետում ոչ միայն համապատասխան կապերի ու հարաբերությունների «ցանցին», այլև, որ ավելի կարևոր է, գիտական նյութի մատուցման և հիմնավորման նորագույն եղանակներին՝ սկսած հասկացութային համակարգի արդիականացման և լեզվական դժվարությունների հաղթահարման խնդրից մինչև հետարդիականությանը բնորոշ պատմագիտական, մշակութաբանական և այլ նորագույն հայեցակարգերի իմացությունը: Նման պայմաններում դրանց ուսումնասիրության, յուրացման ու «հայացման» խնդիրը ավելի հրատապ նշանակություն է ձեռք է բերում, քան **մեծիկների** կամ **փերիկչեքների** նման պարզունակ ասպատակների հետ ճակատային բախման գնալու և «տեղական նշանակության մարտեր» շահելու՝ համեմատաբար դյուրին գործը, որովհետև պայքարի դաշտը տեղափոխվում է միջազգային ասպարեզ՝ աշխարհում «եղանակ ստեղծող» երկրների սահմաններից ներս:

*Քանի որ ժամանակակից աշխարհում հզոր տերություններն անգամ նման մարտահրավերները դիմագրավում են **պերսկական մակարդակով**, մեր երկրում հայագիտության զարգացման ռազմավարության բացակայությունը խիստ բարդացրել ու բարդացնում է նման հիմնախնդրի լուծումը: Ուստի երկար սպասումներից հետո, թվում էր, թե Հայաստանի անկախության վերականգնումից ավելի քան 20 տարի անց՝ 2012 թ. հունվարի 12-ին, ՀՀ կառավարության ընդունած «Հայագիտության զարգացման հայեցակարգին, հայագիտության ոլորտի զարգացման 2012-2025 թվականների ռազմավարությանը և դրա իրականացման միջոցառումների ժամանակացույցին հավանություն տալու մասին»⁴ որոշումը վերջապես կուրբելու է այս ոլորտում կարծրացած սառույցը: Սակայն որոշումն ընդունելուց հետո ՀՀ Կրթության ու գիտության նախարարության կայքում տեղադրված փաստաթղթերի ուսումնասիրությունը կասկած անգամ չի թողնում, որ հիշյալ փաթեթը հարակորեն քարոզչական բնույթ ունի: Առաջիկայում նախատեսվելով կյանքի կոչել «Հայաստանի Հանրապետության հայագիտության ոլորտի զարգացման 2012-2025 թվականների ռազմավարության իրականացման միջոցառումների»՝ 21 կետից բաղկացած ժամանակացույցը⁵, կառավարության արձանագրային որոշմանը կցված ՀՀ ֆինանսների նախարարության տեղեկանքը դրա իրականացման գործին իր հավանությունը պայմանավորել է «առաջիկա միջևնամյակի ծախսային ծրագրերով գիտության համար նախատեսված ընդհանուր չափաբանակների սահ-*

3 Տե՛ս «Վեմ»-ի ներկա համարում առկա՝ «Գերմանիայի գիտնականների բողոքը» հրապարակումը:

4 Տե՛ս <http://www.edu.am/DownloadFile/5011arm-havelvac-hayagitutyun.pdf>

5 Նույն տեղում:

մաններում»⁶ պահելու, այսինքն՝ նոր հարկացում չկատարելու մտադրությամբ: Ներկա պահին նման փաստաթղթի իրականացման անհնարինությունը գիրակցող ՀՀ Գիրությունների Ազգային ակադեմիան էլ իր հերթին, հայրենի կառավարությանը ներկայացրած իր դիրողություններին քաղաքավարի կերպով հավելել է հերկյալ պարբերությունը. «...բերված օրինակները քավարար են ամբողջ փաթեթի՝ ոչ գործնական լինելու մեջ համոզվելու համար»⁷:

Մեր գիրականները լավ են հասկանում, որ 2012 թ. հունվարի 12-ի այս «պարունական որոշման» իրականացման համար ներկա հանգրվանում չնախարեսելով ֆինանսավորման որևէ կոնկրետ աղբյուր, խորհրդարանական ընտրությունների նախօրեին ՀՀ կառավարությունը հայագիրության բնագավառում ևս փորձում է կյանքի կոչել Հասարակի Հանրապետության կենսագործունեության այլ ոլորտներում նույնպես մեծ քափով կիրառվող, իր հանրահայր՝ **քարերականացված-նմանակումային գործելակերպը**:

Այսինքն՝ իր գլխավերևում ունենալով «Հայոց պետականության» ցուցանակը, ինչպես անցած 20 տարիներին, այնպես էլ այսօր Հայաստանում հայագիրությունը փաստորեն շարունակում է մնալ ինքն իր հույսին: Եվ ստացվում է, որ 21-րդ դարի հասարակագիտությանը բնորոշ «նորագույն տեխնոլոգիաներով» զինված վարձու գիտնականների «ինտերնացիոնալ բրիգադների» դեմ, որոնց տարբեր երկրներում ֆինանսավորում ու նախապատրաստում են ադրբեջանաթուրքական լոբբիստական խմբերը, առաջիկայում ևս պայքարելու է ոչ թե պետականորեն հովանավորվող հայաստանյան հայագիրությունը, այլ գիտնականի ու քաղաքացու իրենց պարտքին հավատարիմ «գիտության ֆիդայիները»:

Դրանով հանդերձ, կարծում ենք, հուսալքվելու հիմքեր չկան, քանի որ վերջին տարիների փորձը կրկին ապացուցել է նվազագույն միջոցներով լուրջ բնագծեր նվաճելու՝ հայ գիտատեսական մտքի ներուժ-կարողականությունը: Բացի դրանից, ակնհայտ է, որ նավթադուլարներով գիտնականներ, իսկ վերջերս նաև՝ մարզական ու մշակութային ոլորտների պատասխանատուներ «գնելու» Ադրբեջանի փորձերը հակազդեցություն են առաջացնում բոլոր նրանց մոտ, ովքեր չեն պատրաստվում փողով վաճառել իրենց գիտելիքն ու խիղճը: Իսկ դրանք աշխարհի լավագույն և ամենապատվախնդիր գիտնական-հասարակագետներն են, որոնց հետ համագործակցելու առաջադրանքը ներկայումս ձեռք է բերում խիստ կարևոր նշանակություն: Դա պայմանավորված է նաև Հայաստանի ու հայության պատմական ճակատագրի և ներկա դրության հանդեպ տարբեր երկրներում մեծացող հետաքրքրությամբ, ինչի վկայությունն է Հայոց պատմության վերաբերյալ հայտնաբերվող, հրապարակվող կամ էլ հայ գիտնականներին ու գիտական հանդեսներին փոխանցվող փաստաթղթերի, ուսումնասիրությունների նոր խմբաքանակի ի հայտ գալու փաստը⁸: Նման պայմաններում հայագիրության գիտատեսական զինանոցի հարստացման առաջադրանքը սերտորեն միահյուսվում է նրա սահմանափակ միջազգային կապերի ընդլայնման հրամայականին:

«Վէմ» հանդեսը ի սկզբանե կարևորել է աշխարհի առաջատար հայագիտական կենտրոնների, հանդեսների և անհատ հայագետների հետ կապերի ու հա-

6 Նույն տեղում:
7 Նույն տեղում:

8 Տե՛ս օրինակ՝ «Վէմ»-ի ներկա համարում հրապարակվող՝ ավստրիացի գիտնականներ Վերներ Զայբթի և Մարտին Բիչնաուի «Հայոց Հակոբ Ա Կլայեցի կաթողիկոսի (1268-1286) մոմե կնիքը 1293 թվականի Թիրոլյան ինդուլգենցիաների վրա» հոդվածը:

րաբերությունների հաստատման առաջադրանքը: Այդ նպատակով մեր հանդեսի էջերում անցած տարիներին տեղ է հատկացվել Ռուսաստանի, Ֆրանսիայի, Գերմանիայի, Ավստրիայի և այլ երկրների մի շարք հայագետների հրապարակումներին: Դրանք հնարավորություն են տվել հստակորեն պատկերացնել այն հարցադրումներն ու հասկացությունները, որոնց միջոցով մեր մասին դատում են օտարները, ինչը **փոխհասկացողության դաշտի** ձևավորման և հնարավոր թյուրըմբռնումների հաղթահարման վճռորոշ պայմանն է:

Նույն առաջադրանքի իրականացման համար անցած տարիներին Հայաստանում սուր կերպով զգացվել է նաև գիտության մեջ ինքնուրույն խոսք ասող **անհատականությունների** համախմբման ոչ ձևական, այլ բովանդակային միջոցների կիրառման անհրաժեշտությունը, որոնց դերը արևմտյան մի շարք երկրներում ժամանակին խաղացել են համալսարանական գիտական դպրոցները և առաջատար գիտական ամսագրերը: 20-րդ դարում գիտնական-նվիրյալների նման խմբերն են իրենց վրա վերցրել առանձին գիտակարգերի զարգացումը որակապես նոր մակարդակի բարձրացնելու առաջադրանքը: Նրանք են, որ **մասնագիտական որակների** կատարելագործումով համաշխարհային գիտատեսական մտքի բարձունքներին հասնելու նպատակադրումն իմաստավորում են **բարոյական պարտքի** համատեքստում: Միայն նման որակների կուտակման շնորհիվ է, որ իր թիկունքում պետության աջակցությունը չզգացող հայագիտությունը ներկայումս կարող է հաջողության հասնել միջազգային ասպարեզ տեղափոխվող գիտատեսական բանավեճում:

Այս երկու անխախտ սկզբունքների հիման վրա քննության ենթարկելով Հայաստանի ու հայության պատմությունն ու մշակույթը մարդկության հիշողությունից ջնջելու և յուրացնելու Թուրքիայի ու Ադրբեջանի ներկա **չրջանցիկ-թիկունքային մարտավարությունը**, գալիս ենք այն եզրակացության, որ նրա առաջն առնելու համար եկել է ոչ միայն ավելի ակտիվ, այլև հաշվարկված ու նպատակային կերպով գործելու ժամանակը⁹:

Նավթադոլարներով Եվրոպա արտահանվող կոռուպցիոն գործելակերպի փոխարեն՝ մեր մտքից ու արժեքներից բացի արտահանելու այլ «ապրանք» չունենք: Իսկ դրա համար մեզ բավարար չեն անգամ հայագիտական առարկաներից խորը գիտելիքները: Հարկավոր է նույնքան խորությամբ ճանաչել այն միջավայրերը, որոնցում նոր ճակատ են բացում մեր հակառակորդները: Դրանց գերակշիռ մասում ունենք հզոր հայկական համայնքներ, որոնցում առկա է նաև սովորաբար մտավորականություն: Բացի դրանից, բացառությամբ նախկին ԽՍՀՄ-ի թյուրքալեզու հանրապետությունների, այս միջավայրերը քաղաքակրթական առումով հենց մե՛զ են հոգեհարազատ: Մանավանդ՝ դա վերաբերում է Ռուսաստանին և Արևմուտքի երկրներին, առաջին հերթին՝ Եվրոպային, որտեղ պարտավոր ենք ամրապնդել Հայաստանի հետ պատմական ճակատագրի ընդհանրության մասին համոզմունքը:

9 Դրա մասին է հուշում «Վեմ»-ի ներկա համարում հրապարակվող՝ Գերմանիայի «Քրիստոնեադեմոկրատական միություն» - «Քրիստոնեա-սոցիալական միություն» (CDU/CSU) կուսակցությունների Բունդեսթագի խմբակցության արտաքին քաղաքականության խմբի ղեկավար Ֆիլիպ Միսֆելդերին ուղղված նամակ-տեղեկանքների ժողովածուն: Կարծում ենք՝ հայ գիտնականներն ու լայն հասարակականությունը, միանալով Գերմանիայի մեր գործընկերների նախաձեռնությունը, իրենք ևս կարող են դառնալ Լեռնային Ղարաբաղի Հանրապետության պատմության կեղծարարների դեմ ուղղված էլեկտրոնային արշավի մասնակիցներ: Խմբ.:

Մեր նախաձեռնությունների հանդեպ եվրոպական մի շարք երկրների գիտնականների կողմից վերջերս դրսևորվող լուրջ համակրանքն ու համագործակցելու պատրաստակամությունը գալիս են վկայելու, որ գործելադաշտի միջազգայնացման մարտահրավերին հնարավոր է դիմակայել միայն **հանդիպակաց քայլերի** միջոցով: Եվրոպական քաղաքակրթության մասին մեր գիտելիքների և Հայաստանի ու հայության վերաբերյալ եվրոպացիների գիտական պատկերացումների **հորիզոններն** ընդլայնելու առաջադրանքը ներկայումս որևէ այլընտրանք չունի: Հորիզոնների ընդլայնման՝ արտաքննապես երկկողմանի, էությանը՝ միասնական գործընթացը իրենք իրենց համար գոյություն ունեցող գիտական մտքի կենտրոնների մերձեցման հիման վրա կարող է ստեղծել մեկը մյուսին **հասկանալու** և փոխվստահության այն ամուր համաձուլվածքը, որն անպայման կդիմանա թուրք-ադրբեջանական ասպատակների նոր՝ շրջանցիկ գրոհներին:

Պատմագիտական և ընդհանրապես հումանիտար գիտելիքի համար գոյություն չունի ճանաչողության հորիզոն՝ իր մեջ: Համաշխարհայնացման պայմաններում նա չի կարող ինքնաբավ արժեք լինել իր ներսում, ուստի միայն լայն փոխներթափանցումն է թույլ տալիս իրենք իրենց համար գոյություն ունեցող գիտաճանաչողական հորիզոնների մոտեցումով հետևողականորեն հարդարել փոխադարձ հասկացման ուղին¹⁰:

Մեր ճանաչողության հորիզոնները պետք է այնքան մոտենան միմյանց, որ իրենցով ընդլայնվող գիտական գիտելիքների հարուստ պաշարով ի վիճակի լինեն մշակել փոխհասկացման համար անհրաժեշտ՝ ընդհանուր գիտական լեզու, հիմնարար հարցադրումներ և դրանցից բխող հայեցակարգեր, որոնք կարող են փակել կեղծիքի տարածման բոլոր սողանցքները:

Խմբ.:

THE NEW CHALLENGES OF THE “WAR OF MEMORIES”

Edit.

10 Այս նպատակով «Վեմ»-ի ներկա համարում շարունակվում է հայագիտության համար տեսական-մեթոդաբանական նշանակություն ունեցող ուսումնասիրությունների հրապարակումը: Տես Մարիետա Կ. Նիկողոսյան, Վիլիելմ Դիլթայի «ոգու մասին գիտությունների» համակարգի մեթոդաբանական արժեքը, տես նաև Սմբատ Գովհաննիսյան, Աննալների դպրոցի այլացումը. «Մեր պատմագիտություն», Մաս առաջին: Դետկառուցաբանական հայեցակարգը և պատմության «քանակային» կամ «շարային» ըմբռնումը: